

Արձանագրություն №1 (284)

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015 թ.-ի սեպտեմբերի 10-ի նիստի

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Նա տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 20 անդամներից 17-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. Հայտարարություններ
2. 2016-2016 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:
3. Անվանական կրթաթոշակների նշանակում:
4. Ֆակուլտետի ընդունելության բարելավման հարցը:
5. ԵՊՀ Խորհրդի ռուս բանասիրության ֆակուլտետի ներկայացուցչի թեկնածույան մասին:
6. Որակավորման բարձրացման վարչության աշխատանքի մասին:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստը սկսվեց ռուս բանասիրության ֆակուլտետի դասախոսներ **Մ.Ներսիսյանի** և **Ա. Մամաջանովի** հիշատակը հարգելուց:

1. Պ.Բալայանը հայտարարեց Ա.Սուլժենիցինի հիմնադրամի պատվիրակության այցի մասին:

2. Քննարկմանը ներկայացվեց 2016-2016 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանը: Բաց քվեարկությամբ Գիտխորհուրդը միաձայն հաստատեց 2016-2016 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանը իբրև հիմք:

3. 2015-2016 ուս.տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների ներկայացվել է 4 ուսանող.

Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ - ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /ռուսաց լեզու և գրականություն/ 3-րդ կուրսի ուսանող՝ **Սերինե Մկրտչյան:**

Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ - ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում / 3-րդ կուրսի ուսանող՝ **Անիկ Ավետիքի Բարսեղյան:**

Մոսկվայի կառավարության կրթաթոշակներ.

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում / 4-րդ կուրսի ուսանող՝ **Սահակյան Մոնա**

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում / 4-րդ կուրսի ուսանող՝ **Հովակիմյան Անժելիկա**:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեցին ներկայացված թեկնածությունները:

4. Հաջորդիվ քննարկվեց ֆակուլտետի ընդունելության բարելավման հարցը: Դեկան Պ.Բալայանը ներկայացրեց միջոցառումները, որոնք կարող են ապահովել դիմորդների հոսքը դեպի ֆակուլտետ: Առաջարկվեց վերանայել միասնական քննքկան առաջադրանքները, մոտեցնել այն օտար լեզվի քննքկքն թեստերին, բացել Երիտասարդ բանասերի դպրոց: Առաջարկվում են նոր ուսումնական ծրագրեր: Նոտարային թարգմանություն

Ռուսաց լ. և գրականություն և լեհերեն կամ հունարեն

Միջմշակութային հաղորդակցում և հյուրընկալության հիմունքներ:

5. Քննարկվեց ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի կողմից ԵՊՀ-ի Գիտական Խորհուրդի կազմում առաջադրվող թեկնածուի հարցը: Ելույթ ունեցան՝ Բ.Գ.Գ., պրոֆեսոր Լ.Գ. Բրուսյանը, Բ.Գ.Թ., պրոֆեսոր Մ.Ղ.Այվազյանը: Ելույթ ունեցողները առաջարկեցին ԵՊՀ Գիտական Խորհրդի անդամ առաջադրել ռուս գրականության ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լ.Գ. Հակոբյանի թեկնածությունը: Որոշեցին՝ ԵՊՀ-ի Գիտական Խորհուրդ առաջադրել ռուս բանասիրության ֆակուլտետի ռուս գրականության ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լ.Գ. Հակոբյանին: /ձայների 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ/ հարաբերակցությամբ:

6. Գիտխորհուրդը ուսումնասիրեց Որակավորման բարձրացման վարչության հետ գործակցելու հարցը: Առաջանում են հարցեր, կապված բալերի հաշվառման հետ: Ուսումնական ձեռնարկները չեն համարվում ուսումնամեթոդական աշխատանք, Գիտաժողովի նյութերը դիտարկվում են որպես զեկուցում: Որոշեցին ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով. դոց. Լալայան Ս.Ա., դոց. Շատիրյան Հ.Ս., պրոֆ. Ռ.Ռ. և 2-շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ:

7. Ընթացիկ հարցեր: Ամբիոնների վարիչներին. մինչև սեպտեմբերի 22-ը ներկայացնել ավարտական աշխատանքների թեմաները:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի քարտուղար՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ
Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ